



**Burbank Unified School District**  
Superintendent's Office  
1900 W. Olive Avenue  
Burbank, CA 91506  
Ph: 818.729.4422 • Fax: 818.729.4550

**Board of Education**  
Dr. Armond Aghakhanian, President  
Steve Frintner, Vice President  
Charlene Tabet, Clerk  
Steve Ferguson  
Dr. Roberta Reynolds

**Superintendent**  
Matt Hill, Ed.D.

6.18.2020

Նորություններ գերատեսչի կողմից (6.18.20)

Հարգելի ընտանիքներ, աշակերտներ և աշխատակիցներ.

### **Նորություններ բյուջեի վերաբերյալ**

Օրենսդիր մարմինները դեռ շարունակում են բանակցել նահանգապետի հետ [առաջարկված բյուջեի](#) վերաբերյալ: Մենք պետք է շարունակենք մեր գործը և էլեկտրոնային փոստով նամակներ ուղարկել նահանգապետին և օրենսդիր մարմիններին: Պահանջեք նահանգապետից ընդունել օգենսդիր մարմինների ծրագիրը: [Սեղմել այստեղ օրենսդիր մարմիններին նամակ ուղարկելու համար](#): Առանց նահանգապետի և օրենսդիր մարմինների աջակցության, ԲԴՄԾ-ն ստիպված կլինի ընդունել **նահանգապետի մայիս ամսվա վերանայած բյուջեն, որը \$13 միլիոն դոլարի կրճատում կնշանակի** մեզ համար: Բյուջեի վերաբերյալ հավելյալ տեղեկություն կարելի է ստանալ սեղմելով այս հղումը. <https://www.burbankusd.org/2020-21Budget>. Ձեր առաջարկները կարող եք ուղարկել այս էլեկտրոնային փոստի հասցեին [budget@burbankusd.org](mailto:budget@burbankusd.org). Վերջում ցանկանում եմ ավելացնել, որ Կրթական գրասենյակի ժողովները կարող եք դիտել [սեղմելով այստեղ](#):

- Հինգշաբթի, հունիսի 25-ին, երեկոյան ժամը 7-ին Կրթական գրասենյակի հատուկ ժողով - Բյուջեի ընդունում

### **2020-21 ուսումնական տարվա ընթացքում դպրոցների բացումը**

Դպրոցները բացելու կոմիտեն միասին աշխատելով և ծնողներից ու աշխատակիցներից առաջարկություններ ստանալով աշնանը դպրոցները բացելու մոդելի վրա է աշխատում: Մենք ցանկանում ենք հայտնել, որ 100% հեռակա ուսուցման մոդելը կվերանայվի և տարբեր կլինի գարնանն օգտագործված մոդելից: Մենք կհրամցենք բարդ և ուժեղացված ուսումնական ծրագիր և կներառենք քննություններ և գնահատականներ: Այն ընտանիքներն, ովքեր ցանկանում են ընտրել անձամբ դպրոց հաճախելու տարբերակը, մենք հասկանում ենք, որ մեծամասնությունը ցանկանում է լրիվ դրույքով տարբերակը: Լոս Անջելեսի զավառի առողջապահական գրասենյակի ներկայիս հրամանն անհնար է դարձնում լրիվ դրույքով դպրոց հաճախելը: Սրա պատճառով մենք մշակում են հիբրիդ մոդել, որի ընթացքում աշակերտները դպրոց կհաճախեն կես օրով և մյուս կեսը կանցկացնեն տանը: Մենք հասկանում ենք, որ սա երեխաների խնամքի դժվարություններ կառաջացնի և աշխատում ենք մեր քաղաքային և ոչ շահութաբեր գործընկերների հետ երեխաների խնամքի կարիքները մեղմացնելու համար: Կտրվի հավելյալ տեղեկություն: Ընթացիկ տեղեկատվությունը հասանելի է այս

կայքում <https://www.burbankusd.org/Reopening>. Ձեր առաջարկները կարող եք ուղարկել այս հասցեով [re-opening@burbankusd.org](mailto:re-opening@burbankusd.org). Մենք լրացուցիչ տեղեկություն ենք ցանկանում ստանալ նախագծված մոդելների վերաբերյալ: Խնդրում ենք լրացնել կցված հարցաթերթիկը մինչև հունիս 26-ը, որպեսզի կարողանանք պլանավորել հաջորդ ուսումնական տարին (Այս հարցաթերթիկը դուք կստանաք մի քանի անգամ: Խնդրում ենք լրացնել միայն մեկ անգամ յուրաքանչյուր երեխայի համար):

[Elementary Survey \(Armenian\)](#) Տարրկան դպրոցի հարցաթերթիկ հայերեն լեզվով

[Secondary Survey \(Armenian\)](#) Միջանկյալ և միջնակարգ դպրոցի հարցաթերթիկ հայերեն լեզվով

Շարունակելով աշխատել միասին, մենք ավելի կհզորացնենք ԲԴՄՇ-ն:

Հոգատարությամբ,



Դոկտոր Մաթ Շիլլ  
գերատեսուչ